ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանին 2018 թվականի հոկտեմբերի 14-19-ը Խորվաթիայի Հանրապետություն (Շիբենիկ) և Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղելու արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սուրեն Քրմոյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ հոկտեմբերի 14-19, Խորվաթիայի Հանրապետություն, քաղաք Շիբենիկ, Ավստրիայի Հանրապետություն, քաղաք Վիեննա

Հրավիրող կողմը՝ Խորվաթիայի Հանրապետության արդարադատության նախարար Դրաժեն Բոշնիակովիչ, ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործողությունների համակարգող Վուկ Ժուգիչ

Գործուղման նպատակը՝

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում Խորվաթիայի նախագահության շրջանակում՝ «Ամրապնդել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը պետության հեղինակությունն ապահովելու համար. միավորված կոռուպցիայի դեմ» խորագրով Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) բարձրաստիճան համաժողովին մասնակցություն: Համաժողովն ուղղված է եղել թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդման միջոցով բարեվարքության խթանմանը, ինչպես նաև հակակոռուպցիոն մեխանիզմների, հակակոռուպցիոն մարմինների և լրատվամիջոցների փոխգործունեության ամրապնդմանը:

Վիեննայում կայացած հանդիպումը նպատակ է հետապնդել ամրապնդելու ԵԱՀԿ- Հայաստան համագործակցությունը՝ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով:

Քննարկված թեմաները՝

Համաժողովում քննարկվել են թափանցիկության, հաշվետվողականության, կոռուպցիայի դեմ պայքարում զանգվածային լրատվամիջոցների մասնակցության վերաբերյալ հարցեր:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող մի շարք հարցեր, այդ թվում՝ ԵԱՀԿ աջակցությամբ համատեղ ծրագիր իրականացնելու հնարավորությունը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Խորվաթիայում կայացած համաժողովը Հայաստանի համար կարևորվում էր այն առումով, որ 2017 թվականի մարտին մեկնարկել էր ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլը՝ նվիրված «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը կենտրոնական ապարատում (գործադիր մարմիններում) և իրավապահ մարմիններում» թեմային: Նշված փուլի շրջանակներում Հայաստանն առաջիկայում ևս պետք է ենթարկվի գնահատման:

Համաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

1. Կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցության ամրապնդման կարևորությունը.
2. Զանգվածային լրատվամիջոցների դերը թափանցիկության և բարեվարքության ամրապնդման, կոռուպցիայի կանխարգելման հարցերում.

3. Կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր դրսևորումներում բարեվարքության ամրապնդումը.
4. Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգ. ազգային հակակոռուպցիոն մարմինների միջազգային համագործակցությունը.
5. Կոռուպցիայի կանխարգելման մարմինների ցանցի վերաբերյալ հայտարարագրի ստորագրում:

Համաժողովի ընթացքում Սուրեն Քրմոյանը հանդես է եկել ելույթով, որում ի թիվս մի շարք հարցերի անդրադարձել է նաև կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի արձանագրած հաջողություններին՝ նշելով, որ զգալի առաջընթաց ապահովելը հնարավոր է դարձել համապատասխան օրենսդրական բարեփոխումների, այն է՝ ապօրինի հարստացման քրեականացման, շահերի բախման հայտարարագրման ինստիտուտի ներդրման, ինչպես նաև պետական կառավարման համակարգում մի շարք էլեկտրոնային գործիքակազմերի ներդրման արդյունքում: Սուրեն Քրմոյանն ընդգծել է նաև, որ գարնանը Հայաստանում սկիզբ առած քաղաքական նոր իրողությունները մեկտեղել են կոռուպցիայի դեմ պայքարում շահագրգիռ բոլոր կողմերի ներդրած ջանքերը՝ այդպիսով բարձրացնելով հակակոռուպցիոն պայքարը Հայաստանում մի նոր մակարդակի:

Հարկ է նշել, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ քննարկման արդյունքում, Հայաստանն այս փուլում ձեռնպահ է մնացել կոռուպցիայի կանխարգելման մարմինների ցանցի վերաբերյալ հայտարարագրի ստորագրումից:

Սույն թվականի հոկտեմբերի 18-19-ը Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում տեղի են ունեցել հանդիպումներ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Թոմաս Գրեմինգերի, ԵԱՀԿ դեսպան, Տնտեսական և բնապահպանական ծրագրերի պատասխանատու, դեսպան Վուկ Ժուկիչի և ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի փողերի լվացման դեմ պայքարի հարցերով խորհրդական Օլեքսի Ֆեշչենկոյի հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող մի շարք հարցեր: ԵԱՀԿ-ն պատրաստակամություն է հայտնել աջակցելու Հայաստանի Հանրապետությանը՝ հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման, կոռուպցիոն հանցագործությունների քննության առավել արդյունավետ համակարգ ներդնելու հարցում:

Հայաստանի մասնակցության արդյունքները.

Խորվաթիայում կայացած համաժողովին մասնակցությունը հնարավորություն է ընձեռել ԳՐԵԿՈ-ի գնահատման նոր փուլին ընդառաջ ամրապնդելու ԳՐԵԿՈ քարտուղարության և այլ երկրների պատվիրակությունների հետ համագործակցությունը: Միաժամանակ ելույթի միջոցով անդամ երկրներին ներկայացվել է Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ներկայիս իրավիճակը: Ինչ վերաբերում է ԵԱՀԿ ներակայացուցիչների հետ հանդիպմանը, հարկ է նշել, որ ԵԱՀԿ-ն պատրաստակամություն է հայտնել աջակցելու Հայաստանի Հանրապետությանը՝ հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման, կոռուպցիոն հանցագործությունների քննության առավել արդյունավետ համակարգ ներդնելու հարցում: Ընդ որում, քննարկվել է շուրջ 1.4 միլիոն եվրո արժողությամբ աջակցության ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր) իրականացնելու հարցը, որն ուղղված կլինի կոռուպցիոն գործեր քննող անկախ իրավապահ մարմնի ստեղծմանը:

ՀՀ արդարադատության
նախարարի տեղակալ

Սուրեն Քրմոյան